ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-6

ԵՊՀ ԻՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23. 02. 2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Հ. Մարգարյանը, Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Տ. Թամրազյանը, Ս. Վարդումյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Մադաթյանը, ՈՒԳԸ նախագահ Տ. Թիրաբյանը, Մ. Մելիքսեթյանը, Ա. Ղարախանյանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը, բացելով նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգ

1. 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում /Զեկ. Գ Ավետիսյան/:
2. Ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքների քննարկում և ամփոփում: /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
3. «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատուների հաշվետվություններ: Ուսումնական խորհրդատուի ընթացիկ հաշվետվություն: / Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան, Ս. Սաֆարյան/
4. Ընթացիկ հարցեր:
   4.1 Գիտակրթական գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների ընդունում: / Զեկ. Գ Ավետիսյան/:

Բաց քվեարկությամբ, միաձայն հաստատվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին- 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկման մասին: /Զեկ. Գ Ավետիսյան/

Գ. Ավետիսյանը նշեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 101 ուսանող, որից 70-ը Ֆինանսներ, Տնտեսագիտություն և Տնտեսագիտության տեսություն մասնագիտություններից, 31-ը Զբոսաշրջություն և Սերվիս մասնագիտություններից: Քննաշրջանը հաղթահարել է 63 ուսանող: Միայն գերազանց գնահատական ստացել են 2 ուսանող: Անվճար ուսուցման համակարգով սովորում է 36 ուսանող և բացարձակ առաջադիմությունը կազմում է 94,4%, անբավարար գնահատական ստացել է 1 ուսանող: Իսկ երրորդ կուրսի անվճար համակարգով սովորող ուսանողի ակադեմիական պարտքերը ձևավորվել են՝ առաջին կիսամյակի դասընթացների լսարանային պարապմունքներին, ընթացիկ քննություններին և ստուգումներին չմասնակցելու պատճառով: Այդ ընթացքում, ԵՊՀ-ի թույլտվությամբ, UGRAD/ global undergraduate exchange programm/ կրթական ծրագրի շրջանակներում գտնվել է արտերկրում: Նա հնարավորություն կունենա կուտակված ակադեմիական պարտքերը մարել 2018-19 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքային շրջանի հաստատված ժամանակացույցով:

Վճարովի ուսուցման համակարգում սովորում է 65 ուսանող և բացարձակ առաջադիմությունը կազմում է 44,6%:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ ուսանողներին, որոնց ակադեմիական պարտքերը առաջացել են արտերկրում կրթություն ստանալու կամ հարգելի այլ պատճառներով, ապա անհրաժեշտ է ժամանակ հատկացնել այդ ուսանողներին, որպեսզի նրանք կարողանան հաղթահարել բացթողումները և մասնակցել լուծարքային շրջանին:

Որոշեցին – 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2. *Լսեցին – Ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքների մասին: /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:*

Մ. Միքայելյանը նշեց, որ ուսանողները հիմնականում ճիշտ են բնութագրում դասախոսին՝ գնահատելով նրա թե մանկավարժական, թե մասնագիտական որակները: Մայր բուհում նմանատիպ այլընտրանքային հարցումներ կազմակերպում են նաև ուսանողական ինքնակառավարման մարմինները և որպես կանոն

արդյունքները համընկնում են: Հարցումների ժամանակ ուսանողը միշտ չէ օբյեկտիվ, հասկանալիորեն նկատվում են նաև սուբյեկտիվ մոտեցումներ:

Գ. Հովհաննիսյանը կարևորեց հարցումները՝ արժևորելով ուսանողի տված գնահատականը: Այն պետք է եզրակացությունների հիմք և հետևությունների առիթ ծառայի դասախոսների համար: Միաժամանակ հարցման արժանահավատությունը բարձրացնելու նպատակով նա առաջարկեց իրականացնել յուրատեսակ հետազոտություն կորելյացիոն վերլուծության մեթոդով: Այս մեթոդի կիրառումը թույլ կտա հասկանալ ուսանողին՝ դասախոսի գնահատականի և դասախոսին՝ ուսանողի գնահատականի միջև առկա կապը:
Նրանք նշեցին, որ հարցման արդյունքները, ըստ հարցերի, մանրամասն քննարկվել է ամբիոններում, տրամադրվել դասախոսներին, անհրաժեշտության դեպքում անհատապես քննարկվել դասախոսի հետ:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը:

Ա. Պոտոսյանը նշեց, որ հարցումները պետք է անցկացվեն ուսանողների լայն շրջանակներում: Մեծաթիվ ուսանողների մասնակցությունը նպաստում է ավելի օբյեկտիվ և հավաստի արդյունքներ ձևավորելուն: Եթե դասախոսը գնահատվում է ընդամենը ութ ուսանողի կողմից, ապա ստացված արդյունքները չեն կարող լիարժեք բնութագրել տվյալ դասախոսին:

Որոշեցին - Ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները ընդունել ի գիտություն:

3. *Լսեցին– «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատուների հաշվետվությունների մասին: Ուսումնական խորհրդատուի ընթացիկ հաշվետվության մասին: /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան, Ս. Սաֆարյան/*

ԿԾ պատասխանատուներ Ա. Սարիբեկյանը և Ա. Ուլիխանյանը նշեցին, 2018-2019 ուս տարվա 1-ին կիսամյակում իրենց իրականացրած աշխատանքների համար հիմք է ծառայել Ֆինանսներ և Զբոսաշրջություն մասնագիտությունների կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքային պլանը: Հիշյալ փաստաթղթի բովանդակությունը բխում է ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրից, մասնաճյուղում գործող կանոնակարգերից, Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրությունից, Ընդհանուր տնտեսագիտության, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների աշխատանքային պլաններից:

Ա. Սարիբեկյանը նշեց, որ պարբերաբար հանդիպումներ է ունեցել դասախոսների և ուսանողների հետ և իրականացրել «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի /2019-2023թթ./ վերջնարդյունքների, ընդհանուր և մասնագիտական կառուցամասերի, 2019-2023 ուսումնական պլանի, դասընթացների փաթեթների բարելավման և նորերի ձևավորման վերաբերյալ քննարկումներ: ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի հետ ակտիվ համագործակցության արդյունքում վերանայվել է մի շարք դասընթացների թեմատիկ պլանները, առաջարկվել 2 նոր դասընթացներ, որոնք նախատեսում ենք ներառել 2019-2023թթ. «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրում: Իրականացվել է 2018-2022թթ. «Ֆինանսներ» ԿԾ և դասընթացի վերջնարդյունքների համադրում, մեթոդական աշխատանքներ երիտասարդ դասախոսների հետ դասընթացի փաթեթների կազմման շուրջ:

Որպես կրթական ծրագրի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանը աջակցել է ուսանողների այցերը տարբեր կազմակերպություններ, որտեղ նրանք հնարավորություն են ունեցել հարցեր քննարկել գործնական ոլորտի մասնագետների հետ (NASDAQ OMX ARMENIA, Bekon Produkt), կազմակերպել ֆակուլտետում երկու սեմինար քննարկում, երկու բաց դաս:

Ա. Ուլիխանյանը նշեց կատարած հետևյալ աշխատանքները՝ քննարկվել է դասախոսների և ուսանողների հետ «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի /2019-2023թթ./ վերջնարդյունքները, ընդհանուր և մասնագիտական կառուցամասերը, 2019-2023թթ. ուսումնական պլանը և քննարկումների արդյունքում ձևավորվել է առաջարկությունների փաթեթ, որը հաշվի կառնվի նոր «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի /2019-2023թթ./ ձևավորման ժամանակ: Իրականացվել է 2018-2022թթ. «Զբոսաշրջության» ԿԾ-ի և դասընթացի վերջնարդյունքների համադրում, մեթոդական աշխատանքներ երիտասարդ դասախոսներին հետ դասընթացի փաթեթների կազման շուրջ: Վերամշակվել է կրթական ծրագիրը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշներին (բենչմարքինգ) համապատասխան:

Նա նշեց, որ կազմակերպվել է ճանաչողական այցեր դեպի Գոշի և Պարզ լճեր:

Ուսումնական խորհրդատու Ս. Սաֆարյանը ներկայացրեց իր կողմից կատարված աշխատանքը: Նա նշեց, որ իր կատարած աշխատանքների համար ուղենիշ է եղել ԵՊՀ ԻՄ–ի ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգը: Ուսումնական խորհրդատուն ծանոթացրել է մասնաճյուղում գործող կրթական գործընթացին վերաբերող կանոնակարգին՝ կրեդիտային համակարգին և զեղչերի տրամադրման կարգին, բողոքարկման կարգին և այլն: Կուրսերի ավագներին ծանոթացրել է մատյանների լրացմանը ներկայացվող պահանջներին: Ժամանակին իրականացրել է պայմանագրերի կնքման և ստուգարքային գրքույկների տրամադրման կազմակերպչական աշխատանքները:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Գ. Հովհաննիսյանը:
Նրանք շեշտեցին, որ ԿԾ պատասխանատուներն ու ուսումնական խորհրդատուն իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել են համապատասխան աշխատանքային պլաններով:

Որոշեցին – Ուսումնական խորհրդատուի , «Զբոսաշրջության» և «Ֆինանսներ» ԿԾ պատասխանատուների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

4 Լսեցին – Ընթացիկ հարցեր
4.1 Գիտակրթական գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների ընդունում:

Գ. Ավետիսյանը նշեց, որ առաջին կիսամյակի ընթացքում տնտեսագիտության ֆակուլտետի դասախոսները մի քանի անգամ այցելել են Դիլիջանի ԿԲ ուսումնահետազոտական կենտրոն: Այնտեղ կայացել են քննարկումներ համատեղ ծրագրերի իրականացման, «Ֆինանսներ» կրթական ծրագրի բարելավման, պրակտիկայի կազմակերպման, սեմինար-քննարկումների անցկացման վերաբերյալ:

Տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոսները մասնակցել են IAB Բիզնեսի Միջազգային Ակադեմիայի և «Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա» ընկերության կողմից «Երիտասարդների զարգացում» ծրագրի շրջանակներում կազմակերպած վերապատրաստման դասընթացներին: Այցի արդյունքում մեր դասախոսները հնարավորություն ստացան վարել ընկերության կողմից կազմակերպված թրեյնինգներ և ձեռք բերել նոր հմտություններ:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Նրանք նշեցին, որ այդ այցելությունները շատ լավ արդյունքն են տալիս, բայց շատ ավելի կարևոր է, եթե բուհը կարողանա դասախոսներ գործուղել արտասահման: Այնտեղ նրանք կարող են մասնակցել սեմինարների, գիտաժողովների, ծանոթանալ կրթության նոր մեթոդների և տեխնոլոգիաների հետ:

Որոշեցին - Գիտակրթական գործուղումների վերաբերյալ հաշվետվությունը ընդունել ի գիտություն:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*